



# Ազդարարության Trumpet's Sound **փող**

56-րդ ՏԱՐԻ, ԱՄՏՏԱԼԻԱ  
ՅՈՒՆԻՒՄ - ՓԵՏՐՈՒՄ 2025



«ԱԶԳԱՐԱՐՈՒԹԵՆ ՓՈՎ»  
երկամսյա հոգեուր քերք

Պատասխանատու խմբագիր՝  
հովիւ Հրաչ Գուլուճեան

ACM AUSTRALIA  
PO BOX 1593,  
CHATSWOOD NSW 2057  
EMAIL: hkiujian@acmaust.org  
URL: www.acmaust.org



### Բովանդակություն

Վախ	3
<i>Հովիւ՝ Հրաչ Գուլուճեան</i>	
Եկեղեցւոյ կառուցումը	4
<i>Երոճ Հատւք</i>	
Ութ հարց	6
<i>Տոն Աթորսր</i>	
Իր բերանը բանալով	9
<i>Նէյլ Պուքման</i>	
Նամակի մը զօրութիւնը	13
<i>Քաղուածք</i>	
Վանաձորը ուշադրութեան կեդրոնին	15
<i>Տօբթ.՝ Դանիել Եւյմս</i>	

Կազմի նկարը՝ Սպանդարեանի ջրամբար,  
Սիւնիքի մարզ, Հայաստան

### Աղօթքի նիւթեր

- Աղօթեցէ՛ք Հայաստանի եւ հարեւան պետութիւններու հետ այդքան անհրաժեշտ խաղաղութեան համար:
- Աղօթեցէ՛ք մեր գործընկերներու անվտանգութեան, իմաստութեան եւ զօրութեան համար:
- Աղօթեցէ՛ք Տօբթ. Եւյմսի Մարտին Հայաստան այցելութեան համար:
- Աղօթեցէ՛ք 2025 թ.-ի ACM-ի Հայաստան միսիոներական ճանապարհորդութեան համար:
- Աղօթեցէ՛ք Հայաստանի եւ Լիբանանի մեր ինամքի տակ գտնուող բազմաթիւ ընտանիքներու համար:
- Աղօթեցէ՛ք, որ Տէրը ապահովէ մեր բոլոր կարիքները:

**Սոյն թերթի ծախսերը կը հոգացուի հաւատացեալներու սրտաբուխ նուէրներով:**

## Վախ

Ի՞նչ է վախը: Արդեօ՞ք այն պարզապէս զգացում մըն է: Մենք կը վախնանք ամէնօրեայ լուրերուն հետեւելէ, կը վախնանք, երբ կը տեսնենք, թէ ինչպէս կը փոխուի մեզ շրջապատող աշխարհը: Մենք կը վախնանք հայելիին մէջ նայելու, որպէսզի չտեսնենք օրէ օր փոփոխութեան ենթարկուած մեր մարմինները, ճերմկցած մազերը... մենք կը սկսինք ծանր լսել, տեսնել...:

Մեր կեանքին մէջ ցանկացած փոփոխութիւն՝ ըլլայ այն աշխատավայրին մէջ կամ տանը, թէ պարզապէս յանկարծակի իրավիճակ մը, մեզ անհանգստութիւն եւ վախ կը պատճառեն:

Տէր Յիսուսը խօսեցաւ թռչուններու մասին ըսելով. *«Նայեցէք երկրնքի թռչուններուն, որոնք ո՛չ կը սերմանեն եւ ո՛չ կը հնձեն, ո՛չ ամբարի մէջ կը ժողվեն, բայց ձեր երկնաւոր Հայրը կը կերակրէ զանոնք: Չէ՞ որ դուք անոնցմէ լաւ էք: Հիմա ձեզմէ ո՛վ կրնայ իր հոգ ընկելով իր հասակին վրայ կանգուն մը աւելցնել»* (Մատթ. 6:26-27):

Դաւիթ թագաւորը ամէն օր Տէր Աստուծոյ երեսը կը փնտռէր. *«Տէրը փնտռեցի ու ինձի պատասխան տուաւ եւ իմ ամէն երկիւղներէս զիս փրկեց: Անոր նայեցան ու լոյս առին եւ անոնց երեսները չամչցան: Այս աղքատը աղաղակեց ու Տէրը լսեց անոր եւ զանկիս իր բոլոր նեղութիւններէն փրկեց: Տէրոջը հրեշտակը իր բանակը անկէ վախճողներուն չորս կողմը կը դնէ ու զանոնք կ'ազատէ: Ճաշակեցէ՛ք ու տեսէք թէ Տէրը բարի է: Երանի՛ այն մարդուն որ անոր կը յուսայ»* (Սաղ. 34:4-8):

Կեանքը այնպիսի իրավիճակներ կրնայ մատուցել մեզ, որ Տիրոջ անմիջական օգնութեան կարիքը ունենանք: Ես երբեք չեմ մոռնար այն իրավիճակները, երբ Տիրոջը կանչեցի ու Ան Իր ձեռքը մեկնեց ու փրկեց զիս: Այդ իրավիճակներուն ոչ մէկ հետքն անգամ չէ մնացած կեանքիս մէջ:

*«Տէրը զօրութիւնս ու սասարս է. իմ սիրտս անոր յուսաց ու ես օգնութիւն գտայ: Ուստի սիրտս ուրախացաւ եւ ես իմ երգովս զանկիս պիտի գովեմ»* (Սաղ. 28:7):

Ուրեմն համարձակ եղէք: Ան պատրաստ է ձեզ նոյնպէս օգնելու: Պարգապէս կանչէք Անոր անունը: Տէրը կրնայ օգնել ձեզ:

Հ. Գ.

## **Եկեղեցւոյ կառուցումը**

*Գործք Առաքելոց 1-12 (1)*

### **Եկեղեցւոյ հիմքը**

**Վ**երջերս կանանց նկատմամբ բռնութեան, իշխանութեան չարաշահման եւ անարդարութեան դէմ երթեր ու ցոյցեր տեղի ունեցան: Այս խնդիրներու շարունակական բնոյթը ցոյց կուտայ, որ մարդկային յարաբերութիւնները թերի են, եւ մենք չենք կրնար ատոնք վերականգնել: Սա Աստուծոյ դէմ մեր ապստամբութեան ախտանիշն է: Բայց Յիսուսի մէջ կարելի է գտնել արդարութիւնը, որուն կը ձգտինք: Յիսուսի միջոցով Աստուծոյ հետ ճիշտ յարաբերութիւններ ունենալով՝ նոր կեանք կրնանք ձեռք բերել: Իսկ եկեղեցիներն այնտեղ են, որտեղ կարող ենք ուրիշներու հետ ապրիլ սորվիլ եւ ամողջ մարդկային յարաբերութիւններ զարգացնել:

Եթէ կ'ուզէք վաղ եկեղեցու մասին իմանալ, ապա մի' դիմէք Հին Կտակարանին, քանի որ եկեղեցին այդ ժամանակ գոյութիւն չունէր: Մի' դիմէք Աւետարաններուն (Մատթէոս, Մարկոս, Ղուկաս եւ Յովհաննէս), քանի որ եկեղեցին այդ ժամանակ գոյութիւն չունէր: Եկեղեցին սկսած է Յիսուսի Երկինք համբարձուելէն 10 օր անց: Մենք պետք է սերտենք Գործք Առաքելոց գիրքը, որտեղ կը տեսնենք, որ Աստուծոյ վկաները կը տարածեն Աւետարանի ուղերձը եւ ամենուր եկեղեցիներ կը հիմնեն:

### **Համատեքստ**

Հրեայ Մեսիան խոստացուած էր Հին Կտակարանին մէջ, եւ Աւետարանները կը պատմեն Անոր երկիր գալու մասին: Սուրբ Հոգին խոստացուած էր Աւետարաններուն մէջ, եւ Ան եկաւ ապրելու հաւատացեալներուն մէջ Գործք Առաքելոց գրքին մէջ:

Հին Կտակարանը կը նկարագրէ Աստուծոյ եւ հրեայ ժողովուրդի յարաբերութիւնները մինչեւ մ.թ.ա. 400թ.-ը: Իսկ Նոր Կտակարանը Յիսուսի եւ Անոր հետեւորդներու պատմութիւնն է, եւ թէ ինչ կը նշանակէ Յիսուսին հետեւիլ: Աւետարանները կը նկարագրեն Յիսուսի կեանքը: Իսկ Գործք Առաքելոցը կը նկարագրէ եկեղեցիին առաջին 30 տարիները: Այն գրուած է քրիստոնէաներուն վաղ եկեղեցիի մասին կրթելու համար:

Գործք Առաքելոցը գրուած է Ղուկասի կողմէն, ով Պօղոսի ընկերակիցն էր (Կող. 4:10-14, Բ Տիմ. 4:11, Փիլիպ. 24): Ուստի Ղուկասը առաջին ձեռքէն փորձ ունէր Յիսուսի հետեւորդներու եւ անոնց պատգամի մասին: Ան գիտէր անոնց պատմութիւնը: Ղուկասը հաւանաբար հեթանոս էր, բայց Ան ծանօթ էր հրեական հաւատքին:

Գործք Առաքելոց գրքին մէջ տեղի ունեցող իրադարձութիւնները տեղի կուենան Մերձաւոր Արեւելքին եւ Միջերկրական ծովի շրջակայ երկրներուն մէջ: Հռովմէական կայսրութիւնը իշխանութեան մէջ էր, եւ ժողովուրդէն կը պահանջուէր ընդունիլ կայսեր եւ բազմաստուած Հռովմէական աստուածներու գերագանցութիւնը:

Յիսուսը եւ առաքելները հրեայ էին: Իսկ վաղ եկեղեցիի անդամները հրեայ կամ հրեայ նորադարձներ էին: Անոնք դեռ կը հետեւէին հրեական շատ սովորութիւններու եւ կ'երթային հրեական տաճար եւ ժողովարաններ, քանի որ տուներէն բացի եկեղեցական շէնքեր չկային:

Քրիստոնէաները եւ անհաւատ հրեաները տարակարծիք էին Յիսուսի Անձի եւ գործի նկատմամբ: Եկեղեցին յայտարարեց, որ Յիսուսը հրեայ Մեսիան էր, ով յաղթած էր մահուան եւ կը վերականգնէր ողջ արարչագործութիւնը: Բայց անհաւատ հրեաները չէին հաւատար, որ որպէս յանցագործ խաչուած Մարդը խոստացեալ Մեսիան էր: Այս տարբերութիւնը քրիստոնէաներու եւ ոչ քրիստոնէայ հրեաներուն միջեւ խզում առաջացուց, որը կը շարունակուի մինչեւ օրս:

Վաղ հրեայ քրիստոնէաները կը կարծէին, թէ բոլոր հեթանոսները կռապաշտներ են, բայց անոնք աստիճանաբար հասկցան, որ Քրիստոսին հետեւող հեթանոսները պէտք է լիակատար կարգավիճակ ստանան քրիստոնէական եկեղեցիին մէջ:

Ճորն Հաուր  
Շարունակելի...

## Ութ հարց

Մաղաքեայ 1-3

**Մ**աղաքեայի ժամանակակից մարդիկ այնպիսի հարցեր տուին, որոնք բացայայտեցին անոնց հոգեւոր տգիտութիւնը: Անոնք բաւարարուած էին իրենց արդարութեամբ՝ չկրնալով գիտակցիլ, թէ իրականութեան մէջ որքա՛ն հեռու են Աստուծմէ: Մենք պէտք է մտածենք անոնց տուած հարցերու մասին եւ Տիրոջ առջեւ մեր անձերը քննենք, քանի որ նման վերաբերմունքը հեշտութեամբ կրնայ ներթափանցել նաեւ մեր մէջ:

### «Մեզ ինչո՞վ սիրեցիր» (1:2)

Մաղաքեայի մարգարէութիւնը կը սկսի Տիրոջ յայտարարութեամբ, որ Ան կը սիրէր անոնց: Ժողովուրդն իսկոյն հարցուց. «Մեզ ինչո՞վ սիրեցիր»: Ահա մարդիկ, ովքեր չկրցան գիտակցիլ, որ միայն Աստուծոյ սիրոյ շնորհիւ է, որ անոնք կեանք ստացան: Աստուծոյ սէրը անոնց հանդէպ դրսեւորուեցաւ Յակոբի ընտրութեամբ, որմէ Մեսիան պիտի գար: Աստուած նաեւ պահեց անոնց՝ ի տարբերութիւն Եսաւի սերունդին:

### «Բու անունդ ի՞նչ բանով անարգեցինք» (1:6)

Ամենակարող Տէր Աստուծոյ անունն անարգելը բան մըն է, որմէ պէտք է սարսափինք: Բայց քահանաները անդադար կ'անարգէին Տիրոջ անունը՝ զոհասեղանի վրայ պիղծ ուտելիք մատուցելով: Այսպիսով, անոնք տուին երրորդ հարցը:

### «Քեզ ինչո՞վ պղծեցինք» (1:7)

Երբ Աստուած քահանաներուն մեղադրեց զոհասեղանի վրայ պիղծ ուտելիք մատուցելու մէջ, անոնք հարցուցին, թէ ինչով զինք պղծեցին: Պատասխանն այն էր, որ թէեւ անոնք զոհեր կը մատուցանէին, բայց Աստուծոյ չէին առաջարկեր իրենց լաւագոյն կենդանիները: Ասոր մէջ քահանաները միաբանութեան մէջ էին այն մարդկանց հետ, ովքեր անկատար զոհաբերութիւններ կը մատուցէին: Քահանաները պէտք է մերժէին զոհաբերութեան բերուած կենդանիները: Փոխարէնը անոնք մարդկանց ձեռքէն ընդունեցին ծեր, հիւանդ եւ արատաւոր կենդանի-

ները, փոխանակ Մովսէսի՝ իրենց սորվեցուցածի պէս ընէին: Աստուած պահանջեց, որ գոհաբերուող կենդանին անարատ ըլլար:

Մենք չարաչար մոլորուած ենք, եթէ կը մտածենք, թէ մեր անւայնակ կրնանք տալ Աստուծոյ ու Ան գոհ կը մնայ: Մենք մեր ժամանակը կը ծախսենք մեզ համար հաճելի բաներու վրայ, իսկ յետոյ կիրակի օրը մէկ ժամ Աստուծոյ կը նուիրենք: Մենք կը ծախսենք մեր գումարները մեզ հաճոյք պատճառող բաներուն վրայ եւ մի քանի մետաղադրամ կը դնենք եկեղեցիին գանձանակին մէջ: Եթէ այդպէս կ'ընենք, մենք անելի լաւը չենք, քան իսրայելցիները, ովքեր կ'ըսէին, թէ Տիրոջ սեղանը պղծուած է:

### «Ինչո՞ւ» (2:14)

Աստուծոյ չէր գոհացնէր այն կեանքը, որով մարդիկ կ'ապրէին, յատկապէս տղամարդիկ: Անոնք կը բաժնուէին իրենց կողակիցներէն եւ հեթանոս կանանց հետ կ'ամուսնանային: Այնուհետեւ հասկնալով, որ Աստուած չ'ընդունիր իրենց գոհաբերութիւնները, անոնք կեղծ ապաշխարութեամբ եւ արցունքներով գոհասեղանը կը ծածկէին: Իսկ յետոյ կը հարցնեն, թէ ինչո՞ւ Աստուած չ'ընդունեց իրենց:

Խորապէս սխալ բան մը կայ, եթէ չենք կրնար տեսնել, թէ ինչը Աստուծոյ հաճելի չէ մեր կեանքին մէջ: Այս տղամարդիկ այնքան կուրացած էին իրենց մեղքի հանդէպ եւ այնքան հեռու էին Աստուծոյ ուզածէն, որ չէին կրնար պատկերացնել, թէ ինչու համար Աստուած գոհ չէր իրենցմէ: Անոնք կ'ամուսնալուծուէին օտար կանանց հետ ամուսնանալու համար եւ կը զարմանային, թէ ինչու Աստուած գոհ չէր:

Աստուած կ'ատէ ամուսնալուծութիւնը: Ա Կորնթացիս նամակին մէջ Պօղոսը չամուսնալուծուելու հրահանգ կ'ուղղէ բոլոր այն զոյգերուն, որոնց երկու կողմն ալ հաւատացեալ են: Եթէ կինը թողնէր իր ամուսնուն, Ան պէտք է չամուսնանար կամ հաշտուէր իր ամուսնուն հետ: Մենք պէտք չէ ազդուինք մեզ շրջապատող աշխարհի չափանիշներէն, այլ պէտք է Աստուծոյ պատուիրաններուն հետեւինք:

### «Ինչո՞վ ձանձրացուցինք» (2:17)

Ժողովուրդն իր ըսածներով կը յոգնեցնէր Տիրոջը եւ յետոյ կը հարցնէր, թէ ինչո՞վ յոգնեցուցին կամ ձանձրացուցին զինք: Սակայն անոնք տակնուվրայ ըրած էին իրենց չափանիշները: Անոնք կ'ըսէին, թէ չա-

րիք գործողները բարի են Տիրոջ առաջ: Այս վերաբերմունքը շատ տարածուած է մեր օրերուն մէջ: Մեր հասարակութեան մէջ շատերը մերժած են բացարձակներու նկատմամբ ցանկացած հաւատք եւ կ'ընեն, թէ բոլոր տեսանկիւններն ալ ընդունելի են: Եթէ մարդն իրեն հարմարաւէտ կը զգայ, ուրեմն իր արաքը ճիշտ է: Բայց մենք յաճախ կը նկատենք, որ այսպէս մտածողները կ'ակնկալեն, որ մենք համապատասխանենք իրենց խեղաթիւրուած մտածելակերպին: Բայց Աստուած եւ Անոր չափանիշները չեն փոխուիր (3:6):

### **«Ինչո՞վ դառնանք» (3:7)**

Քանի որ Աստուած անփոփոխ է, Ան պահեց Աբրահամին տուած Իր ուխտը, եւ այդ պատճառով Իսրայէլցիները չկործանուեցան: Թէեւ անոնք հեռացած էին Անոր ճանապարհներէն, Ան կանչեց իրենց, որ Իրեն դառնան: Բայց անոնք հարցուցին, թէ ի՞նչ ճանապարհով վերադառնանք:

Սա տխուր իրավիճակ է: Մարդիկ Տիրոջմէն հեռացած էին: Անոնք հեռացած էին Անոր արարողութիւններէն: Սակայն անոնք դեռ գոհեր կը մատուցանէին: Անոնք կը կարծէին, թէ ճիշտ կ'ընեն: Ինչո՞վ դառնային: Բայց խնդիրն այն էր, որ անոնց կը մտահոգէր միայն երկրպագութեան արարողակարգերը: Անոնց սրտերը ամբողջութեամբ Տիրոջը չէին փնտռեր: Այդ իսկ պատճառով անոնք չէին գիտեր, թէ ինչպէս Տիրոջը վերադառնան:

Մենք այսօր կը քննենք մեր անձերը եւ կը հարցնենք, թէ արդեօ՞ք անկեղծ ենք Տիրոջը մեր երկրպագութեան եւ Անոր համար մեր ծառայութեան մէջ, թէ՞ պարզապէս արարողակարգերով հետաքրքրուած ենք:

### **«Քեզմէ ի՞նչ կողոպտեցինք» (3:8)**

Մարդիկ ամբողջութեամբ իրենք իրենց համար կ'ապրէին եւ չէին մտածեր իրենց ունեցուածքէն կամ ժամանակէն Տիրոջը տալու մասին: Աստուած տեսաւ սա որպէս կողոպուտ, նոյնիսկ եթէ անոնք իրականութեան մէջ տաճարէն ոչինչ չէին գողնար: Այն ամէնը, ինչ ունինք, ի վերջոյ Տիրոջը կը պատկանի: Արդեօ՞ք կուտանք Անոր այն, ինչ Իրեն կը պատկանի:

### «Քեզի դէմ ի՞նչ խօսեցանք» (3:13)

Ութ հարցերէն վերջինը կը վերաբերի Աստուծոյ ծառայելու անոնց վերաբերմունքին: Աստուած նկարագրեց անոնց խօսքերը, որպէս Իր դէմ հնչած խիստ խօսքեր: Իրականութեան մէջ անոնք կ'ըսէին, թէ անօգուտ է Տիրոջը ծառայել: Անոնք կ'ակնկալէին որոշակի օգուտ իրենց ծառայութեան համար: Այնուամենայնիւ անոնց ամէն ունեցածը Տէրոջմէն էր: Մի՞թէ անոնք պատրաստակամօրէն չէին կրնար տրամադրել իրենց ժամանակը եւ ունեցուածքը Տիրոջ ծառայութեան համար:

Բայց եկէ՛ք մեր անձերը քննենք. որքա՞ն պատրաստակամ Տիրոջը կուտանք: Արդեօք Տիրոջը կը ծառայենք վարձատրութեան ակնկալիքէ դրդուած, թէ՞ սէրէ:

Սակայն ոչ բոլոր Իսրայէլցիներն այդպէս էին: Մենք կը կարդանք. «Այն աստէն Տէրոջմէ վախցողները իրարու հետ խօսեցան: Տէրը մտիկ ըրաւ ու լսեց եւ իր առջեւ յիշատակի գիրք գրուեցաւ Տէրոջմէ վախցողներուն համար ու անոր անուան վրայ մտածողներուն համար» (3:16): Աստուած կը տեսնէ Իր համար մեր կատարած ծառայութիւնը եւ Ան կ'օրհնէ անոնց, ովքեր կը ծառայեն եւ ամբողջ սրտով Իրեն կ'երկրպագեն:

Թող որ ըլլանք անոնցմէ, ովքեր կը որոշեն հաւատարմօրէն ու լաւագոյն կերպով Տիրոջը ծառայել:

Տոն Սթոյրմը

## Իր բերանը բանալով կը սորվեցնէր անոնց

*Մատթէոս 5-րդ գլուխ*

### Մաս 1 - Ամբոխը

Պատկերացուցէ՛ք, որ կ'սպրիք ժամանակաշրջանի մը մէջ, երբ տենդի պատճառով կրնաք մահանալ, երբ կեանքը կարճ է ու ծանր, իսկ մարդիկ անյոյս կը տառապին: Պատկերացուցէ՛ք, որ կը լսէք մար-

դու մը մասին, ով ձրիապէս կը բժշկէ բոլոր անոնց, որոնք իրենց հիւանդութիւններով եւ տանջանքներով անոր կը մօտենան, անկախ հիւանդութեան կամ տանջանքի տեսակէն: Պատկերացուցէ՛ք, որ կը լսէք մարդու մը մասին, ով ընդամենը մէկ խօսքով կ'ազատէ դէներով բռնուած մարդկանց: Մտածէ՛ք այն ուրախութեան մասին, որը Ան բերաւ, քանի որ քայքայուած մարմինները բժշկուեցան, կեանքեր փրկուեցան: Յուսահատութիւնը փոխարինուեցաւ գոհութեամբ ու զարմանքով, սուգը վերածուեցաւ պարի: Ամբողջ խօսակցութիւնը Նազարէթէն եկած Մարգարէի մասին էր: Պատկերացուցէ՛ք, որ կը գտնուիք այն բազմութեան մէջ, որը կ'երթար դէպի Յիսուսը:

Դուք կը տեսնէք զինք՝ նստած բլրի լանջին եւ Իր աշակերտները հաւաքուած Իր շուրջը: Հետաքրքրասէր ամբոյսը կը շրջապատէ անոնց՝ ուշադիր լսելով Անոր իւրաքանչիւր խօսքը:

***«Երանի՛ հոգիով աղքատներուն, վասն զի երկնքի թագաւորութիւնը անոնցն է»:***

Անոր արտասանած առաջին բառերը կը հնչեն այնքան նոր, այնքան յուսադրող, այնքան տարբեր այն ամենէն, ինչ անոնք երբեւէ լսած էին: Ծիշտ ինչպէս Անոր բժշկարար հպումը հիւանդ մարմիններուն կեանք տալու գորութիւն ունէր, այնպէս ալ հիմա Անոր խօսքերը կարծես կը վերականգնէին վիատուած ու խաւարած հոգիներու հաւատքն ու յոյսը:

Այս հասարակ մարդկանց համար Աստուծոյ Օրէնքը նման էր բարձր սարի մը, որու վրայ հնարաւոր չէր բարձրանալ: Անոնք Աստուածաշունչագետներ չէին Մովսէսի գրուածքներու բոլոր բարդութիւնները ուսումնասիրելու համար, ուստի մարգարէներու խօսքերը անոնց մէջ վախ ու շփոթմունք առաջացուց: Ամէն շաբաթ ժողովարաններուն մէջ դպիրներուն եւ փարիսեցիներուն ուսմունքը լսելով աւելի կը յուսահատուէին:

***«Երանի՛ հոգիով աղքատներուն, վասն զի երկնքի թագաւորութիւնը անոնցն է»:***

Ինչպէս սառը ջուրը ծարաւ հոգիին և գով օդը՝ մարդաշատ սենեակին, այս խօսքերը հրաշալի էր լսել: Ամբոյսին մէջ կային առօրեայ կեանքի պահանջներէն յոգնած ժողովուրդ մը, աշխատող տղամար-

դիկ ու կանայք, որոնք լիովին զբաղուած էին իրենց ընտանիքները ապահովելու գործով: Անոնք չէին կրնար մեծ ձեռքբերումներով, ուսումով կամ մեծ առաքինութիւնով պարծենալ: Անոնք իսկապէս հոգիով աղքատներ էին, բայց մի՞թէ Ան կ'ըսէր, որ այդպիսիները Երկրնքի թագաւորութիւնը պիտի ժառանգեն: Ինչպէ՛ս կրնար այդպէս ըլլալ: Չէ՛ որ անոնք անհամար օրէնքներ խախտած էին, չէ՛ որ սուրբ օրը չէին պահած եւ տաճար ընծաներ չէին բերած: Ի՞նչ կ'ըսէր այդ ամէնի մասին:

**«Երանի՛ սգաւորներուն, վասն զի անոնք պիտի մխիթարուին»:**

Կային ոմանք, ովքեր դառնացած էին ու վրդովուած իրենց բաժին հասած կեանքի համար: Բայց կային ուրիշներ, ովքեր կը սգային իրենց ընկած պետութեան եւ ազգի ողորմելի վիճակի համար, որը երբեմնի ազատ ու բարգաւաճ էր, բայց այժմ Հռովմի կողմէ կապանքներու մէջ էր ու կը շահագործուէր անոր կառավարիչներու կողմէ: Անոնց Ան տուաւ մխիթարութեան խոստումը: Անոնց աղօթքներն ու արցունքները յիշուեցան եւ պիտի պատասխանուին:

**«Երանի՛ հեզերուն, վասն զի անոնք պիտի ժառանգեն երկիրը»:**

Հռովմը կ'արհամարհէր թուլութիւնը եւ կը փառաբանէր իր զօրութիւնն ու նուաճումները: Արդեօ՞ք հեզերը, խոնարհները, Աստուծոյ ամէն ինչին մէջ հնազանդողները պիտի ժառանգեն՝ երկիրը: Ինչպէ՛ս կրնայ այդպէս ըլլալ:

**«Երանի՛ անոնց որ անօթի ու ծարաւ են արդարութեան, վասն զի անոնք պիտի կշտանան»:**

Իւրաքանչիւր անձ, ով պահ մը կը քննէ իր սեփական սիրտը, շուտով կը յայտնաբերէ հպարտութեան տարբեր մակարդակներ եւ Աստուծոյ դէմ կատաղի ապստամբութիւն մը, որը կը ցնցէ մարդու միտքը: Մենք կրնանք արդարութեան քաղց ունենալ, բայց ուրկէ՞ կ'առաջանայ այդ: Լոյսը չի կրնար խաւարէն առաջանալ: Դարձեալ անոնք կը լսեն Անոր տարօրինակ խոստումը, որ այդպիսի քաղցը կը յազեցնէ:

Այս մի քանի խօսքերով Ան անոնց առջեւ դրաւ անձի մը պատկերը, ով աղքատ, վշտացած, հեզ, հնազանդ եւ Աստուծոյ արդարութեան տենչացող է: Այս հոգին հարուստներու, ազգի կառավարիչներու, կրօնական առաջնորդներու եւ սպասաւոր քահանաներու ուշադրութեանը

երբեք չէր արժանանար: Այս հոգին պէտք է անսահման օրհնուած ըլլար, եւ ճիշտ այս հոգիին է, որ Երկնքի աչքերը ուշադրութիւն դարձուցին:

Եթէ այդ օրը ամբոյսին մէջ ըլլայիք, ապա ինչպէ՛ս կ'արձագանքէիք այս ապշեցուցիչ խօսքերուն: Արդեօ՞ք կը հեռանայիք՝ ծաղրելով այն, ինչ ձեր կարծիքով անիմաստ իտեալիզմ է, թէ՛ անդիմադրելիօրէն կ'երթայիք դէպի Ան՝ ձգտելով աւելին լսելու, աւելին իմանալու եւ Անոր յաւիտենական կեանքի խօսքերը աւելի լաւ հասկնալու:

Նէլ Պուքման

## ***Նամակի մը զօրութիւնը***

**Մ**եծամասնութիւնս գիտենք Ճան Ուէյնին, որպէս դերասան: Մակայն չէք գիտեր թէ ինչ եղաւ իրեն, մահանալէն առաջ: Ահա այդ պատմութիւնը:

Ռօպըրթ Շուլքրին աղջիկը՝ Մինտին, մօթորսայլքըով արկած մը ունեցաւ եւ ոտքը պէտք էր անդամահատէին: Ճան Ուէյն շատ կը սիրէր քարոզիչ Ռօպըրթ Շուլքրը, ուստի նամակ մը գրեց արկածեալին ըսելով. «Միրելի՛ Մինտի, շատ կը ցաւիմ ունեցած արկածիդ մասին: Կը յուսամ որ լաւ պիտի ըլլաս»: Ստորագրուած՝ Ճան Ուէյն:

Երկտողը յանձնուեցաւ Մինտիին եւ ան որոշեց պատասխանել հետեւեալ ձեւով. «Միրելի՛ պարոն Ուէյն, ստացայ նամակդ: Ծնորհակալ եմ որ գրեցիք ինձի: Ես ձեզ շատ կը սիրեմ: Լաւ պիտի ըլլամ, քանի որ Յիսուս պիտի օգնէ ինձի: Պարոն Ուէյն, դուք Յիսուսը կը ճանչնա՞ք: Կը յուսամ որ գիտէք Յիսուսը, քանի որ չեմ կրնար երեւակայել թէ երկինքը կատարեալ պիտի ըլլայ առանց Ճան Ուէյնի: Եթէ Յիսուսը տակաւին չես հրաւիրած սրտիդ մէջ, կը յուսամ որ ճիշդ հիմա ընդունիս զայն որպէս Փրկիչ եւ Տէր: Երկինքը կը տեսնուինք»: Հագիւ նամակը ծրարին մէջ դրաւ, այցելու մը մտաւ սենեակը:

«Ի՞նչ կ'ընես» հարցուց ան: Մինտին պատասխանեց թէ նամակ մը գրած էր Ճան Ուէյնին, բայց չէր գիտեր ինչպէս անոր դրկել զայն:

Մարդը ըսաւ. «Ի՛նչ զարմանալի է, որ այս գիշեր Ճան Ուէյնօին հետ ընթրիք պիտի ունենամ Նյու Փորթ Պիչին մէջ, նամակը ինծի տուր եւ ես այն իրեն կը յանձնեմ»: Մինտի ուրախութեամբ տուաւ գրութիւնը եւ մարդը զայն բաճկոնին գրպանը դրաւ:

Տասներկու հոգիներ սեղանի մը շուրջ նստան այդ գիշեր: Անոնք կ'ուտէին եւ կը գուարճանային: Երբ մարդը ձեռքը գրպանը նետեց, նամակը զգալով յիշեց զայն: Ճան Ուէյն սեղանին ծայրը նստած էր: Մարդը նամակը հանեց եւ ըսաւ. «Այսօր Շուրթին աղջկան սենեակն էի եւ ան քեզի նամակ մը գրեց եւ ուզեց որ յանձնեմ: Ահաւասիկ նամակը»: Եւ զայն փոխանցեց դերասանին: Մարդիկը շարունակեցին խնդալ ու գուարճանալ: Երբ մէկը պատահեցաւ Ճան Ուէյնին կողմ նայեցաւ, տեսաւ թէ ան կ'արտասուէր: Անոնցմէ մին ըսաւ. «Ի՛նչ պատահեցաւ»: Ան ցած ձայնով ըսաւ. «Կ'ուզեմ այս նամակը կարդալ ձեզի»: Եւ կարդաց գրութիւնը ու սկսաւ լալ: Ծալլեց թուղթը, գրպանը դրաւ եւ զայն իրեն բերող մարդուն դարձաւ եւ ըսաւ. «Գնա՛ այդ պրզտիկ աղջկան ըսէ, որ ճիշտ հիմա, այս ճաշարանին մէջ, Ճան Ուէյն իր սիրտը Յիսուսի տուաւ եւ զինք պիտի տեսնէ երկինքը»:

Երեք շաբաթներ վերջ Ճան Ուէյն մահացաւ: Երբեք պիտի չգիտնաս թէ մէկու մը ըրած վկայութիւնդ ինչպիսի յաւիտենական ազդեցութիւն պիտի ունենայ:

*«Յարմարութեամբ ըսուած խօսքը արծաթէ զարդերու մէջ դրուած ոսկիէ խնձորներու կը նմանի» (Առակ. 25:11):*

*«Խօսքը քարոզէ մտադրութեամբ... ատենին ու ատենէն դուրս... անտարանիչի գործ գործէ» (Բ Տիմ. 4:2, 8):*

Քաղուած՝ «Աւետարեք ձիթենին» գիրքէն



*«Ասոնք միտքդ բեր, ո՛վ Յակոբ եւ դո՛ւն, ո՛վ Իսրայէլ, քանզի իմ ծառաս ես. Ես ստեղծեցի քեզ, դուն իմ ծառաս ես: Ո՛վ Իսրայէլ, քեզ պիտի չմոռնամ: Քու յանցանքներդ՝ մէզի պէս ու քու մեղքերդ ամպի պէս ջնջեցի: Ինծի դարձիր, քանզի քեզ փրկեցի»:*

*Եսայեայ 44:21-22*

## Վանաձորը ուշադրութեան կեդրոնին

«Ըստ անոնց. «Ձեզի չի՛ վերաբերիր ժամերը եւ ժամանակները գիտնալը, որ Հայրը իր իշխանութեանը մէջ դրաւ: Բայց Սուրբ Հոգին ձեր վրայ եկած աստե՛նը զօրութիւն պիտի առնէք ու ինձի համար վկաներ պիտի ըլլաք Երուսաղէմի մէջ եւ բոլոր Հրէաստանի ու Սամարիայի մէջ ու մինչեւ երկրին ծայրերը»» (Գործք 1:7-8):

Մենք բոլորս յիշեցումներու կարիք ունինք, ինչպէս այն մարդիկ, ովքեր ամենամօտն էին Տէր Յիսուսին՝ մինչեւ Անոր համբարձուիլը:

Ձեզի չի վերաբերիր.

- Ժամերը (*chronos*) - ժամանակի տարածութիւն կամ ժամանակագրական ժամանակ, ինչպէս որ գիտենք:
- Ժամանակները (*kairos*) - ժամանակը չափելու չափանիշ, ինչպէս նաեւ յարմար պահի յղում:

Այս երկու բառերը (ժամերն ու ժամանակները) կ'ընդգրկեն ժամանակի հայեցակարգը, անոր իրականութիւնը եւ եզակի հարթութիւնը՝ որպէս Արարչի կողմէն մեզի տրուած պարզեւ, որը պէտք է գնահատենք:

Բայց Տէր Յիսուսը բացարձակ յստակութեամբ ըսաւ, թէ ժամերն ու ժամանակները պէտք չէ աշակերտներուն մտահոգեն: Անոնք պէտք է Անոր վկաները ըլլային՝ Անոր զօրութեամբ, մինչեւ երկրի ծայրերը:

Որպէս Քրիստոսի Մարմին՝ մեր Տիրոջ այս եզրափակիչ խօսքերը պէտք է հնչեն մեր մտքերուն մէջ եւ շարունակեն ուժ տալ մեր էութեան իւրաքանչիւր մասնիկին, մինչ կը ձգտինք երկրի վրայ Անոր համար ապրելու:

Փառք կուտանք Տիրոջը, որ Հայ քրիստոնէական առաքելութեան միջոցով Աւետարանը կը քարոզուի Հայաստանի տարբեր վայրերուն մէջ, եւ նաեւ Հայաստանէն դուրս:

Աշխատանքներէն մէկը, որը կ'ուզեմ առանձնացնել Վանաձորն է՝ Հայաստանի երրորդ ամենամեծ քաղաքը: Այն կը գտնուի Երեւանէն մօտաւորապէս 130 կմ հիւսիս:

Խորհրդային ժամանակաշրջանին այն ծաղկուն քաղաք մըն էր եւ յայտնի էր իր քիմիական գործարաններով: Յաւօք, 1988թ.-ի երկրաշարժը մեծ հարուած հասցուց Վանաձորին եւ շրջակայ բնակավայրերուն, եւ այդ աղէտի ազդեցութիւնը տեսանելի է մինչեւ օրս: Մեր տարեկան միսիոներական ճամփորդութիւններու շնորհիւ շատ հաւատացեալներ կը տեղեկանան այս սիրելիներու ծանր վիճակներու մասին:

Նոր Չելանտայի մեր սիրելի եղբայրներու նիւթական աջակցութեամբ կրցանք աջակցել շատ ընտանիքներու արդէն աւելի քան տասը տարի:

Մեր հաւատարիմ ծառայակիցներ Աշոտն ու կինը՝ Յասմիկը, կը շարունակեն ամէն ամիս ընտանիքներուն այցելել՝ խորհրդատուութեան, աղօթքի եւ նուէրներ բաժնելու համար: Բազմազաւակ շատ ընտանիքներ կը շարունակեն ապրիլ մետաղեայ տոմիկներու մէջ, որտեղ կը բացակային ջուրի, կազի եւ այլ առաջին անհրաժեշտութեան պայմանները: Աւելին, այս տոմիկներու մեծամասնութեան տանիքներն ու պատերը վնասուած են: Ընտանիքները կը շարունակեն ապրիլ տոմիկներու մէջ՝ ամռանը բարձր ջերմաստիճանի տակ, իսկ ձմռանը՝ ցածր ջերմաստիճանի տակ: ACM-ն ունի ջեռուցման յատուկ հիմնադրամ, եւ մենք փառք կուտանք Տիրոջը տարիներու ընթացքին ստացած աջակցութեան համար:

Շատ յաճախ մեր խնամակալութեան տակ գտնուող ընտանիքներուն անհրաժեշտ կ'ըլլայ բժշկական հրատապ միջամտութիւն կամ դեղորայք գնելու լրացուցիչ ծախսեր: Որպէս կազմակերպութիւն մենք պայքարած ենք այս լրացուցիչ կարիքները հոգալու համար: Միայն Անոր շնորհքով կրցած ենք օգնութեան ձեռք մեկնել մինչ օրս:

Աւետարանի պատգամը կը շարունակուի տարածուիլ Աստուածաշունչի ուսումնասիրութիւններու միջոցով, թէ՛ տուններուն մէջ, թէ՛ տօնական խմբակներուն մէջ եւ նաեւ տարբեր յատուկ միջոցառումներու ժամանակ:

Աստղիկը՝ ACM-ի մեր ծառայակիցներէն մէկը Վանաձորի մէջ մանկավարժութեամբ կը զբաղուի: Ան ունի 7-12 տարեկան մանուկներու երեք խումբ: Ան նաեւ ունի 13-15 տարեկան պատանիներու խումբ:

Մեր քոյրն օժտուած է Աւետարանի բարի լուրը տարածելու այս տարիքային խմբերուն մէջ: Մենք կը շարունակենք բարձրացնել մեր հաւատարիմ ծառայակիցներուն եւ կամաւորներուն, ովքեր պատրաստակամօրէն եւ ուրախութեամբ կը տարածեն յոյսի պատգամը:

Մենք կը գնահատենք ձեր աղօթքներն ու գործնական աջակցութիւնը մեր ծառայութեան այս յատուկ ոլորտին մէջ: Մեր սրտի փափագն է, որ այս տարածաշրջանին մէջ շատերը իրենց կեանքերը նուիրեն մեր Տիրոջը եւ Քրիստոսին, քանի որ Յիսուսի անունը հաւատարմօրէն կը հոչակուի:

Տօքթ.՝ Դանիէլ Ճէյմս

